

Հիմնավորում

Ամառային ժամանակի անցումը, երբ ժամացույցի սլաքներն առաջ են բերվում մարտ ամսվա վերջին կիրակի օրը, և հետ բերվում հոկտեմբերի ամսվա վերջին կիրակի օրը, ընդունված փորձառություն է աշխարհի բազմաթիվ երկրներում: Ամառային ժամանակի անցումը հնարավորություն է տալիս առավել շատ օգտվել բնական լույսավորությունից: Ներկայումս աշխարհի երկրների 40%-ից ավելին օգտագործում է ամառային ժամանակի անցումը¹, այսպես կոչված` Daylight Saving Time-ը: Այս մոտեցումը կիրառվում է ավելի քան 100 տարի:

Ամառային ժամանակի անցման հիմնական ազդեցությունը, ենթադրվում է, էներգախնայողությունն է, և պատահական չէ, որ 2-րդ համաշխարհային պատերազմի և արաբական նավթային ճգնաժամի տարիների այն լայն տարածում գտավ, սակայն էներգախնայողությունը մեծապես կախված է տվյալ երկրի աշխարհագրական դիրքից: Կան երկրներ, որոնց համար ամառային ժամանակի անցումը հնարավորություն է տալիս առավել երկար ժամանակ օգտվել բնական լույսավորությունից: Նման երկրներից է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ապացուցված է, որ ամառային ժամանակի անցումը, բացի էներգախնայողությունից, դրական ազդեցություն ունի այլ ոլորտների վրա: Մի շարք գիտական հետազոտություններ վկայում են, որ ամառային ժամանակի անցումը փոխկապակցված է ճանապարհատրանսպորտային պատահարների² (այսուհետ` ՃՏՊ) և բնակարանային գողությունների համեմատական նվազեցման հետ³: ՃՏՊ-ի վիճակագրության վրա ազդեցությունը բացատրվում է նրանով, որ փողոցները երկար ժամանակ են բնական լույսով լուսավորված լինում, դա էլ խթանում է, որ նվազեն նման պատահարները:

Էներգախնայողության և անվտանգության որոշակի բարելավմանը զուգահեռ` ամառային ժամանակի անցումն ունի դրական ազդեցություն տուրիզմի զարգացման վրա. ըստ մասնագետների, օրվա մեջ երկար բնական լուսավորությունը թույլ է տալիս զբոսաշրջիկներին մեծացնելու իրենց ճանաչողական հնարավորությունները:

Ամառային ժամանակի անցման վերաբերյալ մի պատկառելի գիտական հոդվածում համապարփակ վերլուծությունների արդյունքում տրվում է գնահատական, ըստ որի` որքան երկրները հեռու են հասարակածից, այնքան մեծ է էներգախնայողությունը<sup>4</sup> (օրական խնայողություններն առնվազն կարող են լինել` 0,34%):

Այսպիսով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը, բնական լուսավորության տևողությունը ամռան ընթացքում, տուրիզմի զարգացման բարենպաստ

¹ Ամառային ժամանակին անցած երկրների ցանկը և այլ վիճակագրությունը հետևյալ հղումով` <https://www.timeanddate.com/time/dst/statistics.html>

² The effects of daylight and daylight saving time on US pedestrian fatalities and motor vehicle occupant fatalities, Douglas Coate, SaraMarkowitz, "Accident Analysis & Prevention", Volume 36, Issue 3, May 2004, Pages 351-357

³ Under the Cover of Darkness: How Ambient Light Influences Criminal Activity, Jennifer L. Doleac, Nicholas J. Sanders

⁴ Does Daylight Saving Save Energy? A Meta-Analysis, Tomas Havraneka, Dominik Hermanb , and Zuzana Irsova, Charles University, Prague: October 12, 2016

հնարավոր դրական ազդեցությունը, ճանապարհատրանսպորտային պատահարների և
հանցագործությունների նվազման հավանականությունը, էներգախնայողությունը հիմնավոր ենք
համարում ՀՀ-ում ժամանակի հաշվարկման կարգի անցումն ամառային ժամանակի: